

Հասնիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՍՆԸ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

«Ալեքսպոլում ստեղծվել էր մի ուրույն աշուղական մթնոլորտ իր պականություններով ու սովորություններով և տարբեր ուղղություններով: Ալեքսպոլի աշուղ-երգիչներից ամենակրտսերը և ժամանակով մեզ ամենից մոտիկը աշուղ-երգահան Գրիգորն էր՝ Տայյանը, երաժշտական հին ընտանիքից սերված, ալեքսպոլցիների կողմից շատ ու շատ սիրված ուստա Գոքորը՝ հետագայում ամեն տեղ ծանոթ ու սիրված երգիչ Շերամը»: Ավետիք Իսահակյան¹

Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքը XIX դ. երկրորդ կեսին նշանավորվեց աշուղ Շերամի ստեղծագործության ծնունդով և նրա՝ մեծ ժողովրդականություն վայելող գործունեությամբ: Բացառիկ էր աշուղի երգաստեղծության նորարարությունը՝ հիմնված հայ ազգային երաժշտամտածողության վրա: Հայտնի է, որ տիրապետելով աշուղական դասական արվեստի հիմնական օրինաչափություններին, Շերամը ստեղծագործության ինքնահաստատման շրջանում սկզբունքորեն հրաժարվեց աշուղական կադապար-մեղեդիներից և իր յուրաքանչյուր բանաստեղծության համար հորինեց ինքնօրինակ՝ անկրկնելի մեղեդի: Ավելին, նրա հորինվածքներում ակնհայտ է երաժշտական բաղադրիչի ծանրակշիռ դերը: Գ. Լևոնյանի դիպուկ բնորոշմամբ՝ «Շերամի երգերի տեքստերին, որպես սոսկ ոտանավորների, դժվար է մոտենալ առանձին, որովհետև նրանք, կարելի է ասել, օրգանապես կապված են իրենց եղանակների հետ: Հեղինակը իր երգ-եղանակները հորինել է միասին՝ «թառը դռչին դրած»: Նա խոսքը հարմարեցրել է եղանակին, շատ անգամներ անտես անելով վանկային և հանգային տարրական կանոնները»:² Այս առումով Շերամին կարելի է կոչել երգահան, որի անգուգակյան մեղեդիները ստեղծման պահից մինչև այսօր հուզում են ունկնդրին՝ իրենց արտահայտչական ու գեղարվեստական ամենաբարձր հատկանիշներով:

Անշուշտ, երաժշտագիտական խորքային ուսումնասիրության նյութ կարող է հանդիսանալ Շերամի երգաստեղծության ծագումնաբանության, երաժշտամտածողության ու, առհասարակ, նրա արվեստի ակունքների լիարժեք բացահայտման խնդիրը: Կարծում ենք, բազմաբևեռ այդ հետազոտության կարևոր բացահայտիչներից մեկն էլ բարերար այն մթնոլորտի նշանակությունն է, որը նպաստել է մեծ աշուղի անկրկնելի տաղանդի անկաշկանդ դրսևորմանը՝ պահանջելով նրանից նորանոր երգեր: Իբրև կարևորագույն փաստ, նշենք 1880թ. Ալ. Մխիթարյանցի կողմից հրատարակված երգարանը, որի մեջ տեղ էր գտել նաև 22-ամյա Գրիգոր Տայյանի «Պարտեզում վարդեր բացված» երգը:

Ներկա հրապարակման մեջ փորձել ենք քննել այն հարցը, թե ի՞նչ է տվել Ալեքսանդրապոլը Շերամին, ինչի՞ շնորհիվ է այդքան սիրվել քաղաքային երաժշտական կյանքում նրա երգարվեստը: Անշուշտ, գոյություն ունեցող փաստերի ընդգրկման շրջանակները և ուսումնասիրության ծավալներն ամբողջությամբ չեն կարող պարփակվել մեկ հոդվածի շրջանակներում: Այդ պատճառով մենք կանդրադառնանք խնդրո առարկային առնչվող կարևոր փաստերի մի մասին՝ ապագային թողնելով դրանց ամբողջական, համակողմանի քննությունը:

Իբրև կարևորագույն աղբյուր, մեր ձեռքի տակ է աշուղի ինքնակենսագրությունը, գրված՝ 1936թ.³ Համոզված ենք, որ այս փաստաթղթում տեղ են գտել մեզ հետաքրքրող խնդրի ուղղակի կամ ակնհայտորեն ենթադրվող մանրամասներ:

Գրիգոր Տայյանը ծնվել է 1857 թվականին Ալեքսանդրապոլում՝ անվանի այն երաժիշտների ընտանիքում, որոնք բացել էին քաղաքում բազմաթիվ աշուղական մրցություններով հայտնի Տայյանների սրճարանը: Սա այն բնկումնային ժամանա-

¹ Ե եր ա մ, Երգեր, Եր., 1959, էջ 3:

² Նույն տեղում, էջ 6:

³ Ե եր ա մ, Ինքնակենսագրություն (ձեռագիր), Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Շերամի ֆոնդ (այսուհետև՝ ԵՖ), N 1:

կաշրջանն էր, երբ քաղաքում արդեն ձևավորվել էր հայեցի մի մթնոլորտ՝ շաղախված տեղաբնակների, կարսեցիների, կարինցիների, մշեցիների, վանեցիների երաժշտական ավանդույթներից:

Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի մի ինքնատիպ ոլորտը ժողովրդական երգարվեստն էր: Արտահայտչական ամսահմանափակ հնարավորություններ ունեցող, սակայն ժանրային մի որոշակի համակարգի մեջ զարգացող այս արվեստը ձևավորել էր բարենպաստ ասպարեզ՝ երաժշտականությանը օժտված երիտասարդի համար: Ի սկզբանե նա նախընտրեց թառի նվագը, ինչը հետագայում յուրահատուկ կերպով բացահայտվեց աշուղի երգաստեղծության մեջ որպես մեղեդիակերտման նշանակալի գործոն: Այսպիսով, թառն ի սկզբանե յուրահատուկ միջոց էր, որը խթանելու էր մեծ երգահանի ստեղծագործական խիզախումները՝ անկրկնելիորեն ոճավորվելով հատկապես նրա ծանր ու ծորուն երգերի մեղեդիներում: Քաղաքային կյանքի անբաժան մասն էր կազմել աշուղական, սազանդարական երգ-երաժշտությունը: Վերջինիս հանդեպ անտարբեր չկարողացավ մնալ նաև տակավին պատանի Գրիգոր Տալյանը, որն արդեն 18 տարեկանում սկսեց պատրաստել չոնկուրներ, ապա նաև՝ թառեր:⁴ Թե որչափ էր նա կապված իր նախընտրած նվագարանին, խոսում է նրա՝ այդ տարիներին վերաբերող հետևյալ հուշը. «Մի անգամ մեծերս ինձ դրկեցին խզարչիների հետ անտառ, իբրև խազեին, որ խզարչիք տախտակներ ձեն, տանենք Գյումրի ծախենք, թե բանեցնենք: Ես էլ մի թեթեվ թառ ունեի, ինձ հետ տարա, որպեսզի այնտեղ նվագեն ազատ ժամանակս»:⁵

Ապագա աշուղին ընտանիքում փորձում էին դարձնել ատաղձագործ, սակայն այս շրջանում է, որ ի հայտ է գալիս նրա երգաստեղծության տաղանդը, որն անմիջապես գտնում է իր համակիրներին. «Ջահել-Ջահել ընկերներ հավաքվում էին թյուքյանս, ել դուրգյարություն չեի անում խո կարգին, այնպես սիրահարվեցի մուզիկայի վրա, վոր զիշեր ցերեկ թառը ձեռքիցս վար չեի դնում: Ցերեկը բավական չեք, զիշերը մինչև ժամը 1-ը, 2-ը մայրս բարկանում եր ինձ վերա բողբոլին, ասում եր,- «այ տղա, բավական ե, վեր կաց, քնի», իսկի չեի լսում նրան, շորերս հանում էի, մտնում տեղաշորիս մեջ, թառը կրծքիս եի առնում պառկում, ել անգամ կամաց-կամաց մատներով նվագում»:⁶

Ժողովրդական երգի գերազանց իմացության շնորհիվ Շերամին հաջողվում էր ստեղծել դրանց ոճականորեն համահունչ նմուշներ: Այսպես. նրա թերևս ամենահայտնի՝ «Պարտեզում վարդեր բացված» երգն իր մեջ յուրօրինակ ձևով խտացնում է քաղաքային ժողովրդական քնարական երգերի կառուցվածքային և լեզվատոնական տիպական գծերը: Նույնը կարելի է ասել նաև «Ձով զիշեր», «Օլոր մոլոր» և այլ երգերի մասին: Հայ աշուղական արվեստում ժողովրդական երգի ոճավորման կամ ժողովրդականին մանորինակ երգ հորինելու հմտությունն ու գործառույթն ընդունված է եղել: Շերամի կողմից ժողովրդական երգի բացահայտումն ու ոճական իմաստավորումն ընթանում է թառի կատարողական առանձնահատկությունների տիրապետմանը զուգահեռ:

Ի վերջո նա ինքնուրույն որոշում է կայացնում՝ դառնալով նախ թառահարի աշակերտ: Ինքնակենսագրականի համատեքստը հուշում է, որ նրա այդ որոշումը որքան էլ հեշտ ու հանգիստ չի ընդունվել հարազատների կողմից, միևնույն է, նա ապավինել է իր հոգևոր կողմնորոշմանը և չի կասկածել ընտրած ուղու ճշմարտացիությանը. «22 տարեկան հասակիս մեջ արդեն կնիկ ունեի, խանգարեցին միանգամայն: Տեսա դուրգյարությունով չեմ կարող ապրել, բարեբախտաբար Չոնկուր Հակոյի ընկերը բաժանվեց, գնացի Հակոյի հետ ընկեր դառա, վորը յերեվելի ճիանուր* եր ամում, այնպես որ շատ շուտ դարձա Լենինականում հայտնի թառիս Տալյանց Գոգոր»:⁷ Այսպիսով, Շերամի կատարողական առաջին լուրջ քայլերը կապվում են ալեքսպոլցի հայտնի սազանդար Չոնկուր Հակոյի հետ: Վերջինս մեծ ժողովրդականություն էր վայելում քաղաքում և սպասված հյուր էր ամենատարբեր հավաքույթներում: Այստեղ է, որ թրծվում է ապագա մեծ աշուղի բնածին տաղանդը, և նա արդեն այս տարիներին լավատեղյակ

⁴ *Շ, N 1 (բնագիրը ներկայացնում ենք առանց ուղղագրական փոփոխությունների), էջ 3:*

⁵ *Նույնը:*

⁶ *Նույնը:*

* *Քամանչա նվագարանի անվանումներից մեկը:*

⁷ *Շ, N 1, էջ 5:*

էր այն նվազացանկին, որը Ալեքսանդրապոլի հասարակության բոլոր խավերի համար ընդունելի էր: Արդեն 25 տարեկան հասակում նա ելույթներ էր ունեցել բոլոր ակումբներում և նույնիսկ համակրել քաղաքական որոշակի շրջանակների՝ հիմնականում Հնչակյան խմբակների գործունեությանը՝ իր համակրանքն արտահայտելով ոչ միայն կատարողական, այլև հեղինակային ելույթներով. «Գնում էինք դեսուդեն՝ նույնիսկ ակումբները: Հեղափոխական միտքը արդեն հղացել էր իմ մեջս: 25, 26 տարեկան հասակումս կատարյալ գործ էի տեսնում: Շարունակ երեկույթներին պետք էր, որ Գոգորը լիներ նվագողը»:⁸

Սա, անշուշտ, ապագա աշուղի կողմից քաղաքային ժողովրդական երգարվեստի, սագանդարական նվագարանային երաժշտության ժանրային համակարգի, մեղեդիակերտման և ինտոնացիոն բառարանի առանձնահատկությունների տիրապետման ժամանակաշրջանն էր: Ըստ գոյություն ունեցող փաստերի, շատ շուտով սկսվում է Գրիգոր Տայյանի ստեղծագործական պոթելումը, որ Ալեքսանդրապոլի երաժշտական կյանքի անքակտելի մասն էր դառնալու. «Գրում էի խոսքերը և յեղանակները, հորինում ինքնուրույն, այնպես որ՝ յերգը ինձանից, յեղանակը ինձանից, նվագելը ինձանից, դեն ընթերցո՞ղ, լավ իմացի՞ր, այսպիսի մի մարդ էի, միյեվնույն ժամանակ լավ թառեր էլ ինքս էի շինում: Հետո, քաղաքային ակումբում ասիական յերեկոներ էր լինում, մտիկ քաղաքներից շատերը գալիս էին, վորպեսզի Գոգորին լսեն, թե՛ նվագը, թե՛ յերգը»:⁹

Աշուղի ինքնակենսագրության մեջ կա առավել հետաքրքիր մի փաստ, որն աներկբայորեն վկայում է Ալեքսանդրապոլում նորովի ինքնահաստատված *հայ* երաժշտական արվեստի՝ որպես հասարակական պահանջ ներկայացնող երևույթի մասին. «Բավական ժամանակ երգում էի պարսկերեն, հետո ժողովրդի թելադրությամբ (ընդգծումը մերն է) սկսեցի հայերեն յերգել և բանաստեղծություններ անել»:¹⁰

Սա այն ժամանակաշրջանն էր, երբ Ալեքսանդրապոլում հիմնվում էր աշուղական ազգային դպրոցը, որտեղ Ջիվանու ջանքերով նոր ավանդույթներ էին ձևավորում: Ամենակարևոր միտումը բացառապես հայերեն երգերի հորինումն ու կատարումն էր: Շերամը ևս այդ գործընթացի կարևոր մասնակիցն էր և փորձեց մի նոր աստիճանի հասցնել աշուղական երգի անկրկնելի գեղարվեստական արտահայտչականությունը: Ուշադիր ընթերցելով ինքնակենսագրական դրվագները, հնարավոր ենք համարում աշուղի կողմից մեղեդի-կադապարներից հրաժարվելու և ինքնուրույն մեղեդիներ հորինելու մշտական ձգտումը դիտել որպես ուրույն երաժշտական մտածելակերպ, որը կայացավ Ալեքսանդրապոլի երաժշտական միջավայրում, ժողովրդական երաժշտության անմիջական ազդեցության տակ: Ինչպես նշում են աշուղագետները, Շերամի երգերում բանաստեղծության տաղաչափությունը, կառուցվածքը բխում են մեղեդու հորինվածքից, ինչը դարձյալ վկայում է մեղեդիական նորանոր միջոցներով ցանկալի արտահայտչականության հասնելու նրա մշտական ձգտման մասին: Ավելին, սնվելով ժողովրդական ինտոնացիոն ակումբներից, Շերամը Ալեքսանդրապոլի երաժշտական միջավայր բերեց իր ստեղծագործական պրիզմայով անցկացրած, կատարելիության հասնող և՛ պարզ ու ջինջ և՛ շքեղաշուք երգեր:

Գրիգոր Տայյանի երգարվեստի ժողովրդականությունը 1990-ականներին, թվում է՝ կայացած իրողություն էր: Մակայն, որպեսզի նա համարվեր իսկական վարպետ կամ պրոֆեսիոնալ, ըստ աշուղների համբարության կարևոր պայմաններից մեկի, պետք է լիարժեքորեն տիրապետեր բանավոր ավանդույթի պրոֆեսիոնալ նվագարանային արվեստի դասական նվագացանկին, մասնավորաբար մուղամներին: Ահա այս պայմանն էր, որ նրան շարունակ կատարելագործվելու խթան էր ծառայում: Այդ նպատակով նա նույնիսկ օգտվում է Դարաբաղից եկած և Ալեքսանդրապոլում համերգաշրջան անցկացնող համբավավոր Ջումշուղի խմբում նվագելու հնարավորությունից և այդ խմբի անդամների հետ իր արվեստում նվագարանային մուղամը կատարելագործելու երկարատև մի փորձաշրջան է ասքրում: Ի վերջո նա համբարությունում հանձնում է յուրօրինակ «փնություն» և արժանանում աշուղի կոչման:

⁸ Շ Զ, N 1, էջ 5:

⁹ Նույնը:

¹⁰ Նույնը:

Շերամը կարողացավ իր անկրկնելի արվեստով նվաճել համաքաղաքացիներին՝ հասկապես երիտասարդության անմնացորդ սերը: Նրա երգերը ոչ միայն ճանաչված էին: Ավելին, նրանից անընդհատ սպասում էին նոր հորինումներ, նոր նրբերանգներ ու, իհարկե, անկրկնելի մեղեդիներ, որոնք հետագայում համալրելու էին հայ ազգային երաժշտական գանձարանը: Այն, որ Շերամը շատ արագ հրաժարվեց իր բանաստեղծությունները աշուղական կաղապար մեղեդիներով եղանակավորելուց, թվում է՝ դարձյալ շաղկապված է նրան համակրող երաժշտասեր երիտասարդների համառ պահանջներին ու խնդրանքներին: «Շերամի շատ երգերը, - իրավացիորեն նկատել է Կ.Դուրգարյանը, - մտել են ժողովրդի կենցաղի մեջ և պահպանվում են ամենայն սրբությամբ: Նրա վարած խնջույքները կատարյալ համերգներ են եղել՝ ժամանակակիցների վկայությամբ»:¹¹

Աշուղին սիրով հրավիրել են նաև հարսանիքների, որտեղ էլ ծխականացվել են նրա երգերը: Բանահավաք Ալ.Մխիթարյանցի բնորոշմամբ, Շերամի գործունեության շնորհիվ Ալեքսանդրապոլի հարսանիքներում ավանդական են դառնում լարային ամսամբներին ելույթները: «Ղայդեքը փոխվել են, - գրում է նա, - հիմի դավուլ - գուռենն վո՞վ լայեղ կենե, թառ ու քյամանչա գուգեն բիրադի, Տալոյենց Գոքորն որ չչալե ու երգե, էլ հարսը դռենն գելնի՞»:¹²

XIX դարավերջին Շերամի երգերն արդեն հնչում էին քաղաքում հայտնի երաժիշտների ու խմբերի կատարմամբ, նրա արվեստը հետաքրքրում էր պրոֆեսիոնալ երաժիշտներին: Դատելով աշուղի հուշերից՝ նա պատրաստ էր շարունակել երաժշտական կրթությունը և մի նոր հարթության վրա զարգացնել իր կատարողական հմտությունները, եթե կենսապայմաններն ու ընտանեկան հանգամանքներն այլ կերպ դասավորվեին: Այսպես, նա նշում է, որ հորաքրոջ որդին՝ Մուշեղը, շարունակ նոր ու թարմ մտքեր է նրան տվել և հետևողականորեն հսկել է նրա ստեղծագործական աճին. «Այսպես շարունակեցի, ժողովուրդը հակված դեպի իմ կողմը: Մուշեղը ինձանից չէր հեռանում: Այսպես սարքեցին ընթերցանական յերեկոներ. վարժապետներ, վարժուհիներ, ամեն շաբթու մեջ մի որ գնում էինք մեկի տունը կարդում էինք, վիճում էինք, յես էլ թատվս կը լինեի, կընվագեի: Մուշեղը ինձ միշտ բառերի պաշար էր տալիս, ափսո՛ս, վոր իմ բախտից շուտ մեռավ: Յեթե մի տասը տարի կապրեք, այն ժամանակ յես մեծ բան կը դառնայի»:¹³

Շերամի երգերը կատարել և երգեցիկ տարբեր խմբերի համար փոխադրել է Ալեքսանդրապոլում հայտնի պրոֆեսիոնալ երաժիշտ Եփրեմ Գյաղուկյանը, որն ունեցել է երաժշտական կրթություն և սերտորեն համագործակցել է աշուղի հետ: Շերամը երբեմն նույնիսկ սրտնեղել է, որ ոչ բոլորին է հայտնի, որ այդ երգերի հեղինակն ինքն է և ոչ թե Եփրեմը. «Յես այն ժամանակ մի տաք հնչակյան էի: Ամեն շաբաթ երկու կամ յերեք նոր երգ էի հորինում, որպեսզի յերեկույթներին յերգեր յերգեցիկ խումբը, իսկ Յեբրեմ Գյաղուկյանը, վոր նոտա գիտեր, սովորեցնում էր խմբին և յերգում էին, այսպես յերկար ժամանակ, ժողովուրդը չը գիտեր վորտեղից էին այդ յերգերը, ասում էին. «Ես ինչ խապար ե, ես նորա նոր յերգերը յերեկվի Յեբրեմն ե հորինում», այն ինչ, Գոգորինն էր, վորին այժմ աշուղ Շերամ են կանչում»:¹⁴

1902-1915թթ. Ալեքսանդրապոլում հրատարակվում են Շերամի բանաստեղծությունների հինգ ժողովածուներ. «Զնարը» (1902), «Գանգատի շանթեր» (1905), «Սեր և կռիվ» (1907), «Անջուր պարտեզ» (1913), «Անգուստ արշավ» (1915): Սրանցից «Գանգատի շանթեր»-ը նա անվանել է հեղափոխական երգերի ժողովածու և տպագրել «Պետրոգրադ» կեղծ հրատարակչության անվան տակ: Մյուս ժողովածուներում էլ տեղ գտած համաբնույթ երգերը խորհրդահայ երաժշտագիտության մեջ պատշաճ ուշադրության չեն արժանացել, չեն ձայնագրվել, և այսօր դրանց մեծ մասը ժամանակին նոտագրված չլինելու պատճառով մոռացվել է: Ափսոսանքի արժանի այս բացթողումը Շերամի ստեղծագործական ժառանգության լիարժեք ուսումնասիրության մեջ, անշուշտ, թողնելու է իր որոշակի հետքը:

¹¹ Կ. Դուրգարյան, *Շերամ. Գրիգոր Տալոյան, (անտիպ հոդված), ՇՖ, N 24, էջ 4:*

¹² *Նույն տեղում, էջ 5:*

¹³ *Շ Ֆ, N 1, էջ 6:*

¹⁴ *Նույն տեղում, էջ 7:*

Որպես պեքայոյան երաժշտական կենսական աղբյուր՝ Շերամի երգերը հետաքրքրել են ժամանակի շատ մեծանուն բանաստեղծների ու երաժիշտների: Նրա երգերը գրառել են Կոմիտասը, Ալ.Մխիթարյանը, Ա.Բրուտյանը, Վ.Տալյանը, Գ.Ղազարյանը, Ա. Քոչարյանը, բարձր են գնահատել Ա.Տիգրանյանը, Ալ.Սպենդիարյանը և այլ կոմպոզիտորներ: Նրանք հատկապես արժեքավոր են համարել Շերամի պեքսանդրայոյան ձեռագիրն ու ոճը, որի երաժշտական ձևակառուցողական, մոնոդիկ մտածողության յուրօրինակ գծերը լավագույնս կարելի է բացահայտել Ալեքսանդրայոյի քաղաքային երաժշտական արվեստի հայտնի նմուշների հետ դրանց բաղդատության մեջ, ինչն առանձին հրապարակման նյութ է:

Ամփոփելով նշենք, որ աշուղ Շերամի երգաստեղծությունը, որն այսօր էլ հայ կատարողական արվեստում պահանջված է և մեծ հետաքրքրություն է առաջացնում իր գեներտիկ անադարտությանը, ոճական անկրկնելի նկարագրով, իր էական առանձնահատկություններով անդրադարձնում է Ալեքսանդրայոյի երաժշտական կյանքի գեղագիտական իրողությունները: Ուղղակիորեն բխելով քաղաքային երաժշտական կյանքի պահանջներից, միևնույն ժամանակ այդ արվեստն ուղղորդվել և թափ է ստացել քաղաքային այն միջավայրում, որն այսօր՝ ավելի քան մեկ հարյուրամյակ անց դարձյալ ձգտում է այդ արվեստին և կրում է այն որպես հայ աշուղական երգարվեստի շափանիչ:

АШУГ ШЕРАМ И МУЗЫКАЛЬНАЯ ЖИЗНЬ АЛЕКСАНДРОПОЛЯ

___ Резюме ___

___ А. Степанян ___

Песнетворчество великого армянского ашуга Шерама, которое до сих пор востребовано в музыкальной жизни города Гюмри, было генетически связано с той уникальной средой александропольского музыкального калейдоскопа, в которой его песни и игра на таре существовали как неотъемлемая часть эстетических реалий, быта и уклада городской среды. Важнейшим источником, доказывающим многие нюансы этого явления, которые рассматриваются в данной публикации, послужили ценные воспоминания и факты, которые находятся в автобиографии ашуга.